4. ԹԱԳԱՎՈՐԻ ԻՐԵՔ ՏՂԵԿՆԵՐ

Կէղնի, չէղնի թագավորըմ ու ուրեն իրեք տղա ու իրեք ախչիկ։

Թագավոր օր մը ուր տղեկներ կկանչե, կըսե.— Լաո, ես հալվորցեր իմ, վաղ կընկնիմ մեռնիմ, ըդա տուն ձըրն է։ Զըզի բանըմ կըսիմ, աղեկ պահիք. որն օր առչին հեղ կիդա ձըր քուրվըտիք կուղե, տվեք թըղ առնե, էրթա։

Առչին հեղ մեծ դեվ էկավ ուղեց զմեծ քուր. մեծ տղեն վերուց տվեց, առավ դնաց։

Օրթանճա դեվ էկավ զօրթանճա քուր ուղեց, օրթանճա ախրերն էլ զէն վերցուց տվեց։

Մնաց պզտիկ քուր. ըդ դևերու պզտիկ ախբեր լե պզտիկ քուրոջ էկավ ուզընկան։

Պզտիկ ախբերն ըսեց.— Դուք տվիք էն էրկու քուր, հարցուցի՞ք հ՝իսնե. ըդա քուր լե ես կիտամ, էրթա։

Տվեց, առավ գնաց։

Դորն էկավ ախբըրտոց կարգվելուն. իրեք ախբեր ուրանց խոսքերնին ըրին մեկ, ըսին. «Զուր օր մըր հունգուֆին ախչիկ, մըր բոյ, մքր ռանկ, մզի ռաստ չիգա, չպիտի կարգվինք»։

Էդ տեսակ ժում ու ժամանակըմ կմնա։ Ախբըրտանք իրարու կըսին. «Էդա հըմլա նստելով չէղնի, ելնիք էրթանք, մըր քուրվըտիք տվինք, օր մը չգացինք տեսանք՝ կերա՞ն, սաղ ին. էրթաք հըմ մըր քուրվըտիք կտեսնաք, հըմ կօլբրտինք, բալքիմ մեկ-մեկ ախչիկ գտնաք մզի, առնիք հ՝իգանք»։

Ելան գացին։ Շատ գացին, քիչ գացին, գացին քաղաքըմ ելան դուրս»

Սլան էդ քաղաք դուրս, տեսան օր էդ քաղքի մախլուխ հ՝ըմեն մա-
լուլ ին։

Պզտիկ տղեն հարցուց պառվուց մը, ըսեց.—Նանե՛, ըդա քաղքի մախլուբան հ՝որի՞ հըմլա տխուր է։

Ըսեց.—Լաո, դեվ առեր է աղբրի դեմ, չթողե հարքյաս բերե ջուր, խմե, էնդոր համար տրտում ու տխուր ին։

Տղեն ըսեց.—Ախբըրտանք, դուք մանցեք հ՝ոդա, տեսնամ էդ ի՞նչ ազբուր է, էդ ի՞նչ դեվ է ու դառնամ հ՝իդամ. ի՞նչ օր դա էդոնց ըդա տեխն է։

Գնաց մտավ դռա մ՝ էտև։

Ըսեց.—Ինչ օր կա ու չկա, ըդա դռնեն է։

Տեսավ օր դումանըմ էլավ։ Ամպի մեջեն սև ձի մ՝ էլավ, էկավ քամու պես կընցներ, զձեռք թալեց, բռնեց պոչ։

Ձին ըսեց.—Հողածին, զիս թող, զիմ պոչ մ՝բռնի. մազըմ քաշի իմ պոչեն, թող զիս էրթամ, ինչ տեխ օր նեղութենի մեջ ընկար, կիտաս զիմ մազ կրակ, կիդամ կհանեմ։

Տղեն կավտրնա, կքաշե մազըմ ձիու պոչուց, կթողե զձին, կէրթա։ Կէլնի կիգա տուն, ախբըրտոց մոտ։ Ախբըրտանք լե ըդ պառվու տուն կմնան։

Կմնա օլոր օր, մեկ լե կէլնի էն վախտ, կիգա կմտնի էդ դռան մեջ։ Քիչըմ կմնա, կտեսնա օր դումանըմ էլավ, աստված ինք նշանց չիտա, ամպի միջեն կարմիր ձի մ՝ իջավ էդ դռան միջով կընցներ։ Թալեց զձեռք, էդ ձիու պոչ բռնեց։

Կարմիր ձին ըսեց.— Տղա, զիմ պոչ թող, քաշե մազըմ իմ պոչուց, թող էրթամ, ինչ տեխ օր ընկար նեղութենի մեջ, զիմ մազ տուր կրակ, ես կիգամ կհասնեմ։

Տղեն քաշեց մազըմ լե, թորկեց, էկավ տուն։

Ախբըրտանք ըսին.—Ախբեր, հար ե՞բ մեք մնաք ըդա պառվու տուն, էկեք էլնիք լուսուն, էրթանք մըր տուն։

Պզտիկ տղեն ըսեց.— Ախբըրտանք, հըմեն-հըմեն մանցիր ենք, վաղ լե մնաք, էլնիք մեկել օր էրթանք։

Էն օր լե կմնան։ Լուս օր կբացվի, տղեն զուր վախտ թախմին էրիր է, կէլնի կէրթա, մտնի դռան մեջ։ Կիշքե, կտեսնա օր բութե մ՝ ամպ ելավ, սպիտակ ձի մ՝ էկավ՝ կընցնի ուր թափի հետ, ետևանց կթալե զպոչ կբռնե։

Ձին կըսե.—Հողածին, հըմեն-հըմեն ազեկութեն էրեր իս իմ. էրկու քուրվըտոց, ազեկութեն լե ընծի ըրե, մազըմ քաշե իմ պոչեն, թող էր-թամ, ինչ վախտ օր նեղութենի մեջ ընկնաս, իտաս զիմ մազ կրակ, կի-գամ կհասնեմ։

Տղեն անկաճ էրեց։ Քաշեց մազ մը լե սպիտակ ձիու պոչուց, ծալեց դրեց ճեպ ու զձին թողեց։

Զին օր գնաց, ինք դառցավ էկավ պառվու տուն։

Էկավ պառվու տուն, պառկան քնան։ Ելան լուսումութ, էդ պզտիկ տղեն հարցուց, ըսեց.— Նանե, ձըր քաղքի մեջ ի՞նչ կա, ի՞նչ չկա։

Պառավն ըսեց.— Լաո, ի՞նչ կա, մըր թագավորին իրեք ախչիկ կա, իրեք լե մեկ բոյ, մեկըզմեկ խորոտիկ, ուրանց կարքվելու ասըլ ժամանակն է։ Թագավոր իրեք մատնեկ շիներ է, հանդե դրուկ է ուր փանջարի հ՝առեջ, չորս բոլոր լե ասքյար կանուկ է, որն օր ձիով թոնի էն փանջարեն, առնե զէդ մատնեկներ, էրթա, թագավոր զէնի կընե ուրեն փեսա, զուր աղչիկ կիտա էնդոր։

Պզտիկ տղեն ըսեց.—Ախբըրտանք, էկեք մենք լե էրթանք, բալքիմ առնիք զէդ մատնեկներ, հ՝իգանք առնիք ըզթագավորի ախչկներ, էրթանք։

Էրկու ախբերն կըսին.— Ախբեր, դու մի գար, ըզքզի կառնին ձիաննու օտներու մեջ, կլըղղին։

Պզտիկ աղբերն կըսե.— Շատ աղեկ, օր կըսիք՝ մի գա, չիմ հ՝իգա. դուք մենակ էլեք գացեք։

Ախբըրտանքն է, օր կելնեն կէրթան, պզտիկ ախբեր մազ կիտա կրակ, սև ձին կկանի հ՝առեջ, ձեռքըմ սև շոր վրեն։ Կհագնի, կէլնի կհեծնի զձին ու ղանկուն կիտա, կէրթա թագավորի քոշկ ու սարի հ՝առեջ։ Փաթըմ էրկու կէրթա-կիգա, մեկ լե ղանկուն կիտա, ձին կթոնի, տղեն կվերցու զմեծ ախչկա մատնեկն ու կփախնի։

Կիգա, ախբոր կիգա ռաստ։ Ղանկուն կիտա, ձին կառնե զախբեր օտներու մեջ ու կընցնի, կիգա կիչնի ձիուց, կզարկե ձիու սաղրուն, կէրթա, կդառնա, կիգա տուն։

Ախբըրտանք լե կիգան։

Կըսե.— Ախբըրտանք, ի՞նչ կա, չկա։

Մեծ ախբերն կըսե.— Տնավեր, ի՞նչ կա, դրա կըսեր՝ զիս լե տարեք, սև ձիավորըմ էկավ, զիս առավ ձիու օտներու մեջ, քիչ էր մանցի մեռնեք, դու էղներ՝ կմներ ձիու օտներու տակ, էլ գետնեն չըր էլներ։

Պզտիկ ախբեր կըսե.— Բարին աստուծմե օր ես չէկա, աստված իմ դին էր։

Կպառկին քնեն։ Կելնեն լուսուն։ Ախբըրտանք մեկ լե կելնին օր հեծնեն զուրանց ձիանք, էրթան, պզտիկ ախբեր կըսե.—Ի՞նչ կէղնի, օր զիս լե տանեք։

Ախբըրտանք կըսին.— Ղանըմ, դու հ՝ու՞ր կիգաս, քզի կառնին ձիաննու՝ օտներու տակ, կսխկին, մենք չընք կրոնա էլնի էդոնց ձիաննու օտներու միջեն, դու իմա՞լ պիտի էլնիս։

Պզտիկ ախբերն ըսեց.— Ջըք տանի, մը տանեք, էլ հ՚որի՞ն կհեր-ջոտիք։

Ելան ախբըրտանք գացին։

Էդոնք օր գացին, տղեն կարմիր ձիու մազ տվեց կրակ, կարմիր ձին կանավ հ՚առեշ, ձեռքըմ հալավ լե վրեն։ Հեծավ զուր ձին, գնաց։

Քշեց գնաց, կանավ թագավորի քոշկ ու սարի հ՚առեշ։ Շըրինտըմ էրկու գնաց ու էկավ, քիշըմ խաղցուց զուր ձին։ Հ՚ըմեն թափած են ու կանկըցուցած զուրանց ձիանք, ըգ ձիավոր թամաշա կընեն։

Մեկ լե ձիու գլուխ գառցուց, զանկու մը տվեց, ձին թռավ փանշարեն, վերցուց օրթանճա ախչկա մատնեկն ու փախավ։

Էկավ տեսավ օր օրթանճա ախբերն լոխ-լոխ զուր ձին կքշե ու կիգա։ Խամշի մը զարկեց, ձին թռավ ախբոր գլխու վրեն, զախրեր առավ ոտներ, կոխեց ձեռքի վրեն, ձեռք կախվավ կշտեն։ Էկավ իջավ, ձիու սաղրում տփեց, ձին գնաց ուր տեխ, ինք էկավ տուն։

Էկավ տուն, տեսավ օր էդ օր ախբըրտանք հ՚ուրնե շուտ ին էկի։

Ըսին.— Տղա, դու հ՚ուստե՞ն կիգաս։

Ըսեց.— Ես լե թագավորի քոշկի հ՚առշեն ենք, թամաշա կէնեք։

Ըսին.— Տնավեր, չտեսա՞ր կարմիր ձիավորըմ կեր, ձիավորտանք հ՚ըմեն տաթ ու մատաթ են ձեռք, դու հ՚որի՞ն էկար, աղեկ է քզի չառեր է ոտներու մեչ, կոխեց վըր իմ ձեռաց, ըշթա ձեռքս կախվեր է կշտես։

Պառկան քնան. ելան լուսուն։

Ախբըրտանք ելան քաշին զուրանց ձիանք, հեծան կէրթեն, պզտիկ ախբերն ըսեց.—Ջանըմ, զիս լե օր տանիք, ձըր հոգին կելնի՞, ես լե իսան իմ։

Հերսոտան վրեն, ըսին.— Ախբեր, դու բալա իս, դու հ՚ուր կիգաս։

Տեսավ օր ախբըրտոց սրտով չէ, զձեն կտրեց, ախբըրտանք ելան, գացին։

Ախբըրտանք օր ելան գացին, մնաց ինք մենակ։ Սպիտակ ձիու մազ տվեց կրակ, սպիտակ ձին կանավ հ՚առեշ, ձեռքըմ շոր լե վրեն։

Հեծավ զուր ձին ու քշեց գնաց։ Մեյդանըմ էրկու խաղաց, խամշի մը ավեց, ձին հավալանմիշ էղավ, հար ու հաշամ թափեր էր, թամաշա կէնին։ Փանշարի գոգեն առավ զպզտիկ քուրոջ մատնիկն, դառցավ էկավ տուն։ Զձին մեկ լե ճամբցուց, գնաց։

Ախբըրտանք լե էկան։ Էն օր մանցին, հ՚իրկուն էղավ, վերցին իրարու ըսին.—Տեսա՞ք, իմալ թագավորի ախչկներու մատնըկներ տարան ու մենք մանցինք մահրում։

Պզտիկ ախբերն ըսեց.— Տարան, թըղ տանին, էսօր լե կմնաք հ՚ոգա, վաղ կընկնիք ճամբախ։

Լուս օր բացվավ վրր ձրզի ու վրր հազրրնուն, պզտիկ տղեն հարցուց պառվուց, ըսեց.— Նանե, հ'էսօր ի՞նչ կա ձրր քաղքի մեջ։

— Լաո,— ըսեց,— Ի՞նչ պիտի էղնի, հանցել թագավորի ախչկներու կարգվելուց, թագավորի ախչկներու մատնրկներ տարեր ին, հ'էսօր դալալ պիտի իտա կանչել, թե՝ որն օր զիմ ախչկներու մատնրկներ տարեր է, թրղ առնե հ'իգա, պսակիմ, թրղ էլնի էրթա։

Էդ օր լսեց, դառցավ ախբրրտոց ըսեց.— Ախբրրտանք, դրհ ելեք, գացեք ձրր շորեր փոխեք, օր էրթամ, թագավորի ախչկներ ուզեմ ձզիկ։

Ախբրրտանք ըսին.— Ջանրմ, ի՞նչ է քենե դուրս, գլխուցդ դուրս կիտաս, մենք քու ծիծղանելիք չէղանք։

Տղեն ըսեց.— Ջանրմ, ի՞նչ ծիծղանելիք, չրք ավդրնա, ըդա լե ընդոնց մատնրկներ։

Հանեց ծոցեն, նշանց տվեց ախբրրտոնց։

Ախբրրտինք պաղան մացին։ Ելան գացին, զուրանց շորեր փոխեցին։

Թագավոր օր տվեց դալալ կանչել, թե որն օր զիմ ախչկներու մատնրկներ տարեր է, թրղ առնե գա, պսակիմ՝ առնե ամեկ զուր կնիկ էրթա։

Տղեն հանեց զմատնրկներ, իրեկ հեղ թամանտար էղավ ու դրեց թագավորի հ'առեջ։

Ըսեց.— Քու ախչկներու մատնրկներ ես իմ տարի, ընծի էրկու ախբեր կա, պետք է իտաս, առնեմ էրթամ։

Թագավոր ըսեց.— Քզի հալալ էղնի։

Տվեց, առավ գնաց։

Մեծ քուր տվեց մեծ ախբոր, օրթանճա քուրն՝ օրթանճա ախբոր, պզտիկ լե առավ ուրեն։ Ամեկուն մեկ մեկ ձի, մեկ մեկ ձեռք շոր ու սիլահ տվեց, պսակեց, ըսեց՝ գացեք ձրր հոր տուն։

Հ'եբ ելան բարիմնա էղան ուրանց աներոջ մոտեն, կէրթեն, թագավորն ըսեց.— Տղա, լաո, էրթաք, բան չրմ ըսի ձզի, մենակ ըդա սար ճամբախրմ կա, դևերու ճամբախն է, շատ չմնաք, շուտ հ'ընցնիք էրթաք։

Էլան ընկան ճամբախ ու էկան։ Իրեկ օր էկան, հասան ըդ դևերու սինոռ։ Ջայիր-չիման դաշտրմ էր, զարկին զուրանց չադրր ու նստան։ Ամեկ ախբեր ուրեն չադրրրմ զարկեց։

Գիշեր հ'ըմեն մարդ պառկավ քնավ։ Պզտիկ ախբեր տեսավ դևրմ էնդիեն կիգա՝ դրերան բացեր է ու կիգա։ Տղեն տեսավ՝ չէ ըդ դևվի միտք գեշ է, կուզե զուրանք կլու, քաշեց զգուռզ, տարավ բերեց ու հայրմ էդ դևվի գլխուն զարկեց, էղավ հազար կտոր, ընկավ չադրրներու հ'առեջ, ինք էկավ պառկավ։

Լուսուն օր հ'իմցան, կպավ ախբրրտուց գլուխ, ըսեց.—Ջանրմ, դուք

3—915

ի՞նչ անխրմ մարդ իք, հ՚իրկուն կթալիք զգլուխ ձի, լուսուն նոր կելնիք, չրսիք՝ սար ու ձոր է, գել ու գաղան կա։

Ախբրրտանք ըսին.— Մենք շատ գիցուցինք։

Էն ցերեկ լե մանցին հ՚ոնի։

Իրկուն օր էղավ, գու գինաս իսկի բան չրր էղի, էրկու ախբեր զուրանց պզտի ախբոր ըսածներ մոռցան, թալին զգլուխ ուրանց ու առան զուրանց կնկտիք պառկան քնան։

Ախբոր ճար կտրավ, ելավ ընկավ շագրրներու բոլոր ու օլրրտավ։ Մեկ լե տեսավ կնիկրմ, մեկ ծիծ թալեր է էն փեճին, մեկ էն փեճին, ուր ակոեք թիզ մը էլեր է մրոթրներուց դուրս, էն դիեն կիգա։

Տղեն տեսավ՝ չէ, էդոր միտք գեշ է, գուռզրմ լե էդ կնկան թալեց, կնիկ ինչ օր հավու պես թրփրրտկաց, ընկավ գետին։ Էկավ տղեն պառկավ, քնավ։

Պառկավ քնավ, էլավ լուսումութ, տեսավ օր ախբրրտանք գրկած ին զուրանց կնկտիք ու կխրռան, գնաց լրլկեց, իմցուց, էլան։

Ըսեց.— Զրք ամչրնա՞, կգրկիք զձրր կնկտիք ու կպառկիք հ՚իրկվրնե քնիք, հ՚ըմնօր ես հ՚արթուն պիտի մնամ, պահեմ զձգի, բալքիմ ես ու արթուն չմնեք։

Ախբրրտանք ճնկթուն չհանին, բան օր ըսին, հախ ունիս։

Էդ ցերեկ լե մանցին հ՚ոդի։ Իրեկ օր պիտի թմեն, իրկուն օր էղավ, պզտիկ ախբեր մեկ լե տկսեց շադրրներու բոլոր զրվրռնել, ախբրրտոց լե թամբիհ ըրեց, օր արթուն մնան, խոսք լե տվին, բայց մութ կոխելու պես, թալին զգլուխ ուրանց ու պառկան քնան։

Կես գիշեր էղեր էր, չէղեր էր, տղեն մեկ լե տեսավ սարուձոր կթնդա ու կիգա, ձե մ՚ ընկեր է մեջի մեջ, օր քար ու փետ ուր տեխ կդողան։

Էկավ, էկավ, դեվրմ, պզտիկ ախբեր էլավ դեմ, էն զարկեց, էն զարկեց, էն զարկեց, էն զարկեց, զիրար ալթ չէրին, դեվ միամտցուց, զինք թալեց ըդ տղի շադրի մեջ, չունքլի ըդ տղի կնիկ, վրր էրկու քուրոջ լե խորոտիկ էր, վերցուց, թալեց փեճն ու գնաց։

Տղեն հ՚ոդի մնաց, հար լուս բացվավ։ Լուսումութ օր էղավ, ախբրրտանք էլան, իմցան օր, դեվ էկեր է, զուրանց ախբրրկին առեր ու գացի։

Ըսին.— Ախբեր, էկո էրթանք, հոնկուց աղեկ ախչիկ կգտնաք քզի։

Տղեն ըսեց.— Ես չրմ հ՚իգա, կէրթաք դուք, գացեք, ես կէրթամ իմ կնկա էտև։ Զրր խերեն կտանե՞, թողիք զձրր նամուս դուշմրնի ձեռք, էրթաք, իմ նամուս չտանե։

Ախբրրտանք էլան բառցան, գացին։ Ճամբու հետ իրարու ըսին.— Շատ աղեկ, մենք կէրթանք, մրր հոր ի՞նչ ջուհաբ իտանք։

Մեկն ըսավ՝ ըսենք չրնք տեսեր, մեկն ուրիշ բան մ՚ ըսեց։ Սորա խոսքերնին մեկ ըրին, ըսին՝ գառրմ կառնիք, կմորթինք, շապիկրմ լե

կթաթխենք արնի մեջ, կառնիք էրթանք, մըր հոր կըսինք՝ գել ու գաղանն է կերի։

Առան գառըմ, մորթեցին, շապիկըմ թաթխեցին գառան արնի մեջ, բերին ուրանց հոր, ավտրցուցին թե՝ գել ու գաղանն է կերի։

Ախբըրտանք օր գացին, տղեն էլավ բռնեց զգեվի ճամբախն ու գնաց։

Շատ գնաց, քիչ գնաց, գնաց քոշկըմ էլավ դուրս, տեսավ օր ըդ քոշկի տանիք ախչիկըմ կա կանուկ։ Զտղեն օր տեսավ, բոռաց, կանչեց։— Հե՜յ, հողածին, դու՞ ու ըդա տեխրանք, ելի արի վի, տեսնամ, դու ո՞րն իս։

Տղեն էլավ գնաց վի, տեսավ օր ուր մեծ քուր։ Մեծ քուր իշեց, օր էդա ուր պզտի ախրեր, փաթվան իրար, պագեցին զիրար, հաց տվեց, կերավ։

Ասեց ախբոր.— Ախբեր, հըմկա դեվ կիգա, զքզի իմա՞լ պահեմ, օր չտեսնա։

Տղենն ըսեց.— Քու քեֆ գինա, իմալ կպահիս, պահե։

Վերցուց տարավ, քոխտիկըմ կեր, դրեց քոխտըկի մեջ ու չաղցի մը քար բերեց զարկեց դեմ։

Քիչըմ մնաց, կնիկ տեսավ, դեվն էկավ։

Էկավ ըսեց.—Կնիկ, մարդ մարդահոտ։

Կնիկն ըսեց.—Տնաշեն, սարեն-ձորեն գու կիգաս, ի՞նչ մարդ մարդահոտ։

Դեվն ըսեց.—Կնիկ, զիմ ֆարասաթ մը կորցու, զօղորդն ըսե։

Կնիկն ըսեց.— Ի՞նչ զօղորդ ըսիմ, իմ պզտիկ ախբերն է էկի, վախեցա քենե, տարա պահեցի։

Դեվն ըսեց.— Դը օր քու ախբերն է, գնա բի տեսնա՞մ, օր քու ախբեր էղավ, բան չըմ ասի։

Գնաց, առավ զախբերն, էկավ։ Բարովեցին զիրար, դեվն ըսեց կնկան.— Օր քու ախբերն է, բան չըմ ասի։

— Աճայիպ,— ըսեց,— աներձագ, դու իմա՞լ էկեր իս ըդա դին։

Ըսեց.— Էրեկ մեկըմ էկավ, զիմ կնիկ փախցուց, տարավ։ Էկեր իմ, օր էրթամ իմ կնկա էտեն։

Դեվն ըսեց.— Իմա՞լ չգիցա, առնեք ուր ձեռքեն, էրեկ էկավ, էդա տեխեն հ՚ընցավ գնաց, մը վախենա, կէրթաս կառնիս կիգաս։

Պառկավ, քնավ։ Էլավ լուսուն, ընկավ ճամբախ, գնաց։ Գնաց, շատ գնաց, քիչ գնաց, ռաստ էկավ բանձր քոշկի մը։ Տեսավ օր ախչիկըմ ըդ քոշկի տանիք կէրթա կիգա, զտղեն օր տեսավ, ըսեց.—Հե՜յ, հողածին, գու ըդա տեխրանք ի՞նչ գործ ունիս, արի վերին դին, տեսնամ դու ո՞ըրն իս, հ՚ուստե՞ն կիգաս, հ՚ու՞ր կէրթաս։

Տղեն ելավ գնաց վերին դին, ֆքրավ տեսավ՝ էդա ուր միչինեկ քուր։

Քուր լե ֆքրավ, տեսավ՝ ըդա ուր պզտիկ ախբեր։ Փաթվան իրարչ պա-գեցին զիրար, տվեց հաց կերավ։

Ըսեց.— Տղա, քզի իմա՞լ էնեմ, օր էդ անաստվածն չվնասե քզի։

Տղենն ըսեց.— Դու դինաս։

Առավ, տարավ պահեց։ Իրկուն օր Լղավ, փրթավ իրիկ էկավ, ներս մտնելու պես, ըսեց.—Մարդ մարդահոտ կիգա, կնիկ, մըր տնեն։

Կնիկն ըսեց.—Տնավեր, սարեն-ձորեն դու կիգաս, մարդ մարդահոտ քինե կիգա, դինաս տնեն է։

— Կնիկ, զիմ իշքիլ մը կորցու, զօղոր.դն ըսե, տես կօլըրտիմ, կփնտռիմ, քու քեֆ գինա։

Ըսեց.— Ջանըմ, ի՞նչ մարդ մարդահոտե, իմ պզտիկ ախբերն է փրթի էկի, քո վախեն տարեր իմ պահի։

Ըսեց.—Օր քու ախբերն է, գնա հանե բի, բան չըմ ըսի։

Գնաց հանեց առավ էկավ։ Բարովեցին զիրար, հարցուցին, փորձե-ցին, իմա՞լ իս, իմա՞լ չիս։

Դեվն ըսեց սներձգուն.— Իմա՞լ իս էկի։

Ըսեց.— Զիմ կնիկ փախցուցեր ին, էկեր իմ, կէրթամ էտևեն։

Դեվն ըսեց.— Իմալ չգիտցանք, էրեկ էլնեք հ՝առջև, ձեռքեն խ։ենք, մըր տան խեչով հ՝ընցուց, տարավ։ Մը վախենա, կառնիս կիգաս։

Պառկավ քնավ։ Էլավ լուսուն, ընկավ ճամբախ, գնաց։

Շատ գնաց, քիչ գնաց, գնաց հասավ քոշկ ու սարի մը։ Տեսավ օր ախչիկըմ ըդ քոշկի տանիք կէրթա ու կիգա։ Ջտղեն օր տեսավ, բոռաց.

— Հե՜յ, իսանօղլի, դու ի՞նչ ջանավար իս, օր էկեր իս էդա տեխրանք կօլըրտիս, հեղըմ արի վերին դին, տեսնամ։

Տղեն էլավ, գնաց վերին դին։ Տեսավ օր ուր պզտիկ քուր։ Պզտիկ քուր տեսավ, ֆքրավ՝ էդա ուր պզտիկ ախբեր։ Փաթվան իրար։ Պագեցին զիրար։

Հարցուց ախբոր մոտեն.— Դու իմա՞լ իս էկի ըդա դին։

Ախբեր լե ուր գլխու գալած պատմեց։ Հաց բերեց, կերավ, առավ գնաց պահեց, հար էրիկ հ՝իրկուն դառցավ էկավ տուն։

Օր էրիկ դառցավ էկավ տուն, մտավ ներս, ըսեց.—Կնիկ, մարդա-հոտ կիգա մըր տնեն։

Կնիկն ըսեց.— Տնավեր, սարեն-ձորեն դու կիգաս, մըր տուն մարդ մարդահոտ հ՝ուստե՞ն պիտի էղնի։

Դեվն ըսեց.—Կնիկ, զօղորդ ըսե, թե օր քու ազգական էղ՝ի, վըր իմ աչքին ու գլխուն կդնիմ, թե օր չէ՝ խարիբ է, կուտիմ։

Ըսեց.— Ջանըմ, ի՞նչ է ընկեր իս հալուքլին, իմ պզտիկ աղբերն է էկի, տարած են զուր կնիկ, էկեր է, կէրթա ուր կնկա հ՝ետևեն։

— Ըպա հ՝ու՞ր է, բի տեսնամ։

Գնաց, առավ զաղբերն, էկավ։ Փաթվան իրար, պագեցին, բարովեցին զիրար։

Փեսեն հարցուց, ըսեց.— Իմա՞լ խըսըբար էդա դին։

Ըսեց.—Ալավոկի զիմ կնիկ փախցուցին, էկեր իմ, կէրթամ էտևեն։

Դեվն ըսեց.— Իմա՞լ չդիտցա, էրեկ հ՝ընցավ էդա դիով, գիցեր ենք, կրոնեք առնեք ձեռքեն։

— Հըմկա կէրթաս, բան չըմ ասի, բըլե չաթին տեղ է օր կէրթաս»

Տղեն ըսեց.—Զոր էղնի, չէղնի, ես կէրթամ։

Քուրն տեսավ օր իրիկ հոդ չէնե։

Ըսեց.— Մարի, հըմեն հըմեն, ես դինամ դու չըս կըռնա էրթա, բան էղավ օր իմ աղբեր գնաց, ու էն մարդ, ես գինամ անաստված մարդ է, զարկեց սպանեց, կըռնա՞ս անմահութենի ջուրըմ, յախուտ խնձորըմ։ ըերիս, իտաս քթին, սաղնա, էլնի կանի։

Ըսեց.—Կնիկ, թըղ էղնի, վըր իմ գլխուն ու վըր իմ աչքին։

Տղեն պառկավ, քնավ։ Էլավ լուսմութ, ընկավ ճամբաս, գնաց։

Գնաց, շատ գնաց, սարու մը գլուխ տեսավ բանձր քոշկըմ կա շինուկ, գլուխ ամպերու մեջեն կէլնի դուրս։

Էկավ կանավ փանջարի տակ։ Տեսավ ուր նշանլուն նստուկ է փանջարին։ Ճանչցավ, ախչիկ լե ճանչցավ դինք։

Ըսեց.— Տղա, էկա՞ր։

Տղեն ըսեց.— Հա։

Ախչիկն ըսեց.—Ձիս ըդա փանջարից թալեմ ցած, կըռնա՞ս բըռնես։

Տղեն ըսեց.— Օր թալիս չօղմըկիս էն կշտեն ու էն կշտին, հ՝որի՞ չըմ կըռնա բռնի։

Հըտ տղի ըսելուն, ախչիկն ըսեց.— Բռնե, էկա։

Տղեն տվեց զթևեր փանջարի հ՝առեջ, ախչիկ ընկավ տղի ձեռքերու մեջ, վերցուց ու քշեց։

Շատ գնաց, քիչ գնաց, տղեն դառցավ էտևանց, տեսավ օր դեվ ուր էտևեն կիգա։

Ըսեց.— Շան օրթի, դու դինաս ըդա։ լե քու պապու հողու մե՞ջն է, օր կտրճութեն էնես։

Հըտ ըսելուն ճըլոթըմ տղի էրես էկավ, տղեն էղավ հաղար կտոր, մեծ կտոր անկաճ մնաց։ Վերցուց զախչիկն ու դառցավ էկավ ուր քոշկ։

Քուրվրտիքն է, տեսան օր ուրանց աղբեր չէկավ, դրին ուրանց էրկցոց վրեն. «Իլլահի, մըր աղբեր քինե կուզինք»։ Ջուհապ դրին, ճամ-

բին ուրանց պզտիկ ախբոր՝ թե մը ներձագ ըդ դին էկեր է, իմա՞լ է էղի, սպանվե՞ր է, սա՞ է, իմալ էղնի գտնաս, ճամբես հ՚իգա։

Էլավ պզտիկ քուրոշ իրիկ էկավ։ Ժողվեց զաներձգու օսկրրներն իրարու վրեն, ամեկ կտոր դրեց ուր տեխ, գնաց առավ անմահութենի շուր, էկավ, կաթրցուց բերան, քսեց վրը բրրներուն, սաղցավ էլավ կանավ, առավ գնաց ուր տուն, շարաթը մնաց, ըռհաթավ։

Ըսեց.—Ախբեր, ըդա հըմլա չէղնի, քզի բանը սովրցում, էրե։ Ֆլան տեխ կոլըմ կա, կոլի բոլոր դաշտ ու դուրան է, ըդ կոլի մեշ հրեղեն ձի մը կա, հ՚ըմեն տարի օր քուռակ կբերե, արծիվ կիգա, կտանե, ուր քուռկուց խեր չտեսնա. կէլնիս կէրթաս ըդ կոլի խեշ, քզի հոլըքըմ կշինիս, հետդ քանի մը հատ լե դմակ կտանիս։ Զին կէլնի, կիգա շայրի մեշ կծնի, դու վերցու զքուռակ, պահե։ Արծվներ օր էկան, թալե զդմկներ, թող ուտեն, էն ատեն ինչ օր կուզիս էն ձիուց, կկատարե։

Տղեն էլավ գնաց, հետ քանի մը դմակ տարավ։ Ինչ տեխ օր փեսեն ցուցուցեր էր, դրեց ու գնաց հոլըքըմ շինեց, մտավ մեշ։ Մեկ լե տեսավ ձին էկավ, ծնավ, քուռակըմ բերեց։ Արծվներ օր էկան ըդ քուռակ ուտեն՝ զդմկներ թալեց, արծվներ թողեցին զքուռակ, վազեցին դմկի վրեն, կերան կշտացան, թռան գացին։

Զին օր էկավ, քուռակ տեսավ սաղ, էլավ լեզու, ըսեց.—Տղա, ըդա խըտաղ քուռակ բերեր ենք, մեկ սաղ չը մանցի, ըդա աղեկութեն օր էրիր ընծիկ, իսկի գին չկա, ուզե՝ իտամ։

Ըսեց.—Քինե բան չըմ ուզի, իմ կնիկ ֆլան դեվ տարեր է, չըմ կռնա խըլըսու տանի, հ՚իգաս առնես քու թարքեն, էրթանք։

Զին ըսեց.— Էլի հեծի իմ պառեկին, էրթանք։

Տղեն էլավ հեծավ ու էկան, քոշկի հ՚առեշ կանան։ Տեսան ախչիկ փանշարեն նստուկ է։

Ըսեց.— Արի, աստծով էլ էնի մը էտև չկրռնա հ՚իգա։

Ախչիկ թալեց զինկ փանշարից, տղեն բռնեց, թալեց թարքեն ու քշեց։

Զին ըսեց.— Տղա, տես, մարդ կիգա մը էտևեն։

Տղեն դառցավ իշքեց, ըսեց։—Թող ու տումանըմ բռներ է։

Զանկուն զարկեց։

Զին ըսեց.— Տղա, կամկար գնա, էնի իմ թոզին չը հասնի, տես. էնդոր գլուխ ինչ կխաղամ։

Դեվ էկավ, հասավ։ Օր էկավ հասավ, ձին ըսեց.— Տղա՛, զիմ կյամ քաշե։

Տղեն զկյամ քաշեց։ Զին հավալանմիշ էղավ։ Հետին օտներով չոֆթե մը թալեց դեվին, օր մեծ կտոր անկահ մնաց։

Դևվն օր սատկավ, տղեն հուշիկ-հուշիկ քշեց, էկավ պզտիկ քուրոջ մատ։

Օր մը էրկու մնաց հ՝ոնի, շնորհակալ էղավ, հոնկուց էլավ էկավ մեկէլ էրկու քուրվրտոց մոտ։ Ամեկ քուրոջ մոտ էրկու-իրեկ օր մնաց։ Քուրվրթիք զուրանց ախբերն ու ախբրրկին հըլղրթեցին, դրին ճամբու, էկան ուր հոր էրկիր, ջուհաբ գնաց տղի հոր, թը չըսիս՝ քու տղեն առավ զուր կնիկ, էկավ։ Հերն էլավ գնաց տղի հ՝առեջ, բերեց իջուց, թաժա լոթն օր բռնեց հարսնիք, քեֆ ուրախութեն էրին։

Էն էրկու տղեն, օր զինք խաբեր են, էրեց տնեն դուրս, զէդ տղեն դրեց ուր տեխ թուգավոր։

Աստծուց իջավ իրեք խնձոր։ Մեկ՝ ասողին, մեկ՝ լսողին, մեկ լե՝ անկաճ էնողին։